

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

«20» հուլիս 2020թ.

No 2347 - Ա

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ
ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ (COVID 19) ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱԿԱՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ,
ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 728-Լ որոշման հավելվածով հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Ստեղծել առողջապահության նախարարին կից կորոնավիրուսային հիվանդության (COVID 19) դեմ պայքարի մասնագիտական հակահամաճարակային խորհրդատվական խումբ (այսուհետ՝ խորհրդատվական խումբ):
2. Հաստատել խորհրդատվական խմբի անհատական կազմը՝ համաձայն Հավելված 1-ի:
3. Հաստատել «Առողջապահության նախարարին կից կորոնավիրուսային հիվանդության (COVID 19) դեմ պայքարի մասնագիտական հակահամաճարակային խորհրդատվական խմբի աշխատակարգը»՝ համաձայն Հավելված 2-ի:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել առողջապահության նախարարի տեղակալ Լենա Նանուշյանին:

ԱՐՄԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

Հավելված 1

Առողջապահության նախարարի
2020թ. հուլիսի 20-ի թիվ 2347 - Ա հրամանի

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ
ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ (COVID 19) ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱԿԱՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԽՄԲԻ

Հ/Հ	Անուն, Ազգանուն	Պաշտոն
1.	Արսեն Թորոսյան	Առողջապահության նախարար (խորհրդատվական խմբի ղեկավար)
2.	Լենա Նանուշյան	Առողջապահության նախարարի տեղակալ
3.	Լիլիթ Ավետիսյան	ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր տնօրենի տեղակալ
4.	Մարիամ Մնացականյան	ՀՀ ԱՆ հանրային առողջության բաժնի գլխավոր կազմակերպիչ (խորհրդատվական խմբի քարտուղար)
5.	Լիլիթ Խաչատրյան	ՀՀ ԱՆ ԱԱԻ Համաճարակաբանության ամբիոնի ախիստենտ
6.	Վարդուհի Պետրոսյան (համաձայնությամբ)	Հայաստանի ամերիկյան համալսարան, Թրփանճեան հանրային առողջապահության ֆակուլտետի դեկան
7.	Արման Բադալյան (համաձայնությամբ)	Համաճարակաբան, Երևանի պետական բժշկական համալսարանի Համաճարակաբանության ամբիոնի դասախոս

8.	Մերի Տեր-Ստեփանյան (համաձայնությամբ)	Համաճարակաբան, Երևանի պետական բժշկական համալսարանի Համաճարակաբանության ամբիոնի դասախոս
9.	Նունե Դոլյան (համաձայնությամբ)	Առողջապահության համաշխարհային կազմակերպության հայաստանյան գրասենյակի Արտակարգ իրավիճակների պատրաստվածության ծրագրերի համակարգող
10.	Զավեն Նավոյան (համաձայնությամբ)	Թիմ Տելեկոմ Արմենիա ընկերության ներկայացուցիչ
11.	Աստղիկ Գրիգորյան (համաձայնությամբ)	ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության ծրագրի ղեկավար
12.	Վահե Խաչատրյան (համաձայնությամբ)	Հայաստանի ամերիկյան համալսարանի Թրփանճեան հանրային առողջապահության ֆակուլտետի ներկայացուցիչ
13.	Կիմ Հեքիմյան (համաձայնությամբ)	Հանրային առողջապահության մասնագետ, Կոլումբիայի համալսարանի ներկայացուցիչ
14.	Շանթ Շեխերդիան (համաձայնությամբ)	Լոս Անջելեսի Կալիֆորնիական համալսարանի ներկայացուցիչ

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ

ԱՌՈՂՋԱԿԱԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ
ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ (COVID 19) ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱԿԱՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԽՄԲԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Առողջապահության նախարարին կից կորոնավիրուսային հիվանդության (COVID 19) դեմ պայքարի մասնագիտական հակահամաճարակային խորհրդատվական խումբը (այսուհետ՝ խորհրդատվական խումբ) խորհրդակցական մարմին է, որի նպատակն է կորոնավիրուսային հիվանդության (COVID 19) դեմ պայքարին ուղղված քայլերի վերաբերյալ մասնագիտական շահագրգիռ կողմերից շարունակական մասնագիտական խորհրդատվություն և առաջարկություններ ստանալ:

2. ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

2. Խորհրդատվական խումբն իր աշխատանքները կազմակերպում է պարբերական հանդիպում-քննարկումների միջոցով, որոնք գումարվում են կորոնավիրուսային հիվանդության (COVID 19) դեմ պայքարի հարցերի վերաբերյալ խորհրդատվական խմբի ղեկավարի կամ անդամների կեսից ավելիի նախաձեռնությամբ:
3. Խորհրդատվական խմբի անդամները հրավիրվում են հանդիպում-քննարկմանը, որն իրավազոր է, եթե դրան մասնակցում է խորհրդատվական խմբի անդամների կեսից ավելին:
4. Խորհրդատվական խմբի հանդիպում-քննարկումները նախագահում և վարում է խորհրդատվական խմբի ղեկավարը կամ վերջինիս կողմից լիազորված անձը:

5. Խորհրդատվական խմբի անդամներից բացի հանդիպում-քննարկումներին խորհրդատվական խմբի ղեկավարի կամ անդամների կեսից ավելիի համաձայնության դեպքում հրավիրվում են հանդիպում-քննարկման օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ տեղեկատվության տիրապետող Նախարարության աշխատակիցները, Հայաստանի Հանրապետության այլ նախարարությունների ներկայացուցիչներ, պետական այլ մարմինների աշխատակիցներ և օրակարգում քննարկվող հարցերին առնչություն ունեցող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ և այլ շահագրգիռ անձինք:
6. Խորհրդատվական խմբի հանդիպում-քննարկումներն անցկացվում են խորհրդատվական խմբի ղեկավարի կողմից հաստատված օրակարգով, որը ձևավորվում է խորհրդատվական խմբի ղեկավարի և (կամ) անդամների կողմից ներկայացված առաջարկությունների հիման վրա: Խորհրդատվական խմբի ղեկավարը որոշում է հանդիպում-քննարկման օրը, վայրը և ժամը: Հանդիպում-քննարկումների անցկացման մասին անդամները ծանուցվում են հանդիպում-քննարկումից առնվազն երեք օր առաջ: Խորհրդատվական խմբի յուրաքանչյուր անդամ օրակարգում հարց ընդգրկելու համար այն ներկայացնում է նիստից առնվազն երկու օր առաջ:
7. Հանդիպում-քննարկման օրակարգում նշվում են՝
 - 1) հանդիպում-քննարկման անցկացման վայրը, օրը և ժամը,
 - 2) քննարկման ենթակա հարցերի շրջանակը:
8. Խորհրդատվական խմբի գործունեության կազմակերպչական-տեխնիկական ապահովումն իրականացնում է խորհրդատվական խմբի քարտուղարը:
9. Խորհրդատվական խումբը բաց քվեարկությամբ, ձայների մեծամասնությամբ ընդունում է խորհրդատվական բնույթի որոշումներ: Ձայների հավասարության դեպքում վճռորոշ է խորհրդատվական խմբի ղեկավարի ձայնը:
10. Հանդիպում-քննարկումների արձանագրությունը կազմվում է խորհրդատվական խմբի քարտուղարի կողմից, որի մեջ նշվում է՝

- 1) հանդիպում-քննարկման անցկացման վայրը, տարին, ամիսը և ամսաթիվը, սկսելու և ավարտելու ժամերը,
- 2) օրակարգի հարցերը,
- 3) հանդիպում-քննարկմանը մասնակցող խորհրդատվական խմբի անդամների, հրավիրված անձանց անուն ազգանունը, պաշտոնը,
- 4) քննարկվող հարցերի և ելույթների հիմնական դրույթները,
- 5) մասնակիցների ներկայացրած առաջարկները, դիտողությունները և մեկնաբանությունները քննարկվող հարցերի վերաբերյալ,
- 6) ընդունված որոշումները՝ ներառյալ տվյալ որոշման վերաբերյալ քվեարկության արդյունքները,
- 7) այլ անհրաժեշտ տեղեկություններ:
 11. Հանդիպում-քննարկման արձանագրությունը ստորագրվում է խորհրդատվական խմբի ղեկավարի և խորհրդատվական խմբի քարտուղարի կողմից և հանդիպում-քննարկման օրվան հաջորդող հնգօրյա ժամկետում հրապարակվում է Առողջապահության նախարարության պաշտոնական կայքէջում:
 12. Խորհրդատվական խմբի հանդիպում-քննարկումների հետ կապված ծանուցումները և կորոնավիրուսային հիվանդության դեմ պայքարի վերաբերյալ մասնագիտական տեղեկատվության փոխանակումը կատարվում է էլեկտրոնային եղանակով՝ խորհրդատվական խմբի անդամների կողմից տրամադրված էլեկտրոնային փոստի հասցեներով: